ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

Ի պատասխան Ձեր 27.11.2023թ. գրության՝ Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտայի հ.9 շենքի կոյուղատար համակարգի վերաբերյալ, տեղեկացվում է, որ Երևան քաղաքում 2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ջրամատակարարման և/կամ ջրահեռացման խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պատասխանատվության ներքո: Այնուամենայնիվ, հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ տեղեկացվում է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի մասնագետների կողմից խնդիրը կարգավորվել է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ